

#### Կ.Վ. ՏՈՒՐՅԱՆ

### ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՛ ՄԵՄՈՎՐԱՏԻԱ

Հետազոտվել է բաժնետերերի դեմոկրատիայի և առցանց տեղեկատվական համակարգերի զարգացման արդյունքում լայն տարածում ստացող մեմոկրատիայի ազդեցությունը՝ կորպորացիաների կառավարման, բաժնետերերի և հասարակության շահերը հաշվի առնելու և բարեկեցության ավելացման գործում:

**Առանցքային բառեր.** ժողովրդավարություն, մեմոկրատիա, պասսիվ քվեարկություն, լիազորված քվեարկություն, ընկերության կառավարում:

Ներդրողներն ավելի ու ավելի են մտահոգված կորպորատիվ վարքագծի ոչ ֆինանսական գործոններով: Հատկապես վերջին տարիներին մեծանում է վարքագծային ֆինանսների դերը ներդրումային որոշումներ կայացնելիս: Ներդրումային ընկերությունները և ֆոնդերը, որոնք հիմնականում կառավարում են հաճախորդների դրամական հոսքերը, ներդրումային որոշումներ կատարելիս, գիտակցելով տեղի ունեցող փոփոխությունները, սկսում են ավելի հստակորեն ձևակերպել սոցիալական պատասխանատվության պահանջները: Հարստության կառավարիչները փորձում են հնարավորինս հստակեցնել և պարզեցնել կայացվող որոշումների ընթացակարգերը:

Ընկերությունները գնալով ավելի մեծ տեղ են տալիս ինչպես սոցիալական պատասխանատվության, այնպես էլ շրջակա միջավայրի պահպանման, հասարակական զարգացման հարցերի լուծման իրենց մասնակցության հանրայնացմանը: Նման դրսևորումները իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ընկերությունների ռազմավարություններում, շահաբաժնային քաղաքականությունում, անձնակազմի կառավարման հարցերում:

Եվս մեկ զարգացում ապրող ուղղություն է այլ անձանց փոխարեն քվեարկելուց լիազորողների դիրքորոշումների վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնելն ու քվեարկության տարբերակների հեշտացումը, ինչն էլ ավելի է հզորացնում ներդրողներին:

Մյուս կողմից՝ «հիշյալ» բաժնետոմսերի ֆենոմենը բարձրացնում է կորպորատիվ սեփականության, համակարգված շուկայի և կորպորատիվ կառավարման նոր մեխանիզմների հնարավորությունը: Սոցիալական մեդիահարթակները միլիոնների համար դարձել են անձնական ներգրավվածության, կարծիքների համադրման և գործողությունների համակարգման առաջնային ֆորում: Կարծիքի այս հզորացումը և առցանց լրատվամիջոցների ազդեցության աճը, անկասկած,

մարտահրավերներ կստեղծի ներդրումային կառավարիչների, հատկապես հավատարմատար պատասխանատվություն ունեցողների համար:

Արդյո՞ք ընկերությունները կդառնան «մեմոկրատիաներ», որոնք պատկանում և կառավարվում են «գաղափարական» սոցիալական մեդիա համայնքների կողմից: Եթե այո, սա լավ է, թե՞ վատ ընկերությունների, բաժնետերերի և հասարակության համար:

**Մեմոկրատիա.** 2021-ի սկզբին ներդրողներին անվանեցին «ֆլեշ մոր», երբ Reddit-ի հայտարարությունների պատուհանին «Wall Street Bets»-ը գովազդեց «GameStop»-ը՝ վիդեո խաղերի արտադրությամբ զբաղվող ընկերությանը, որը, թվում էր, թե գտնվում է անկման փուլում: Մի քանի օրվա ընթացքում «GameStop»-ի բաժնետոմսերի գինը կտրուկ բարձրացավ՝ մասամբ պայմանավորված հեջ-ֆոնդերի կողմից ընկերության բաժնետոմսերի կարճ վաճառքների փակմամբ և նրա նոր ռազմավարական ուղղությամբ: Սոցիալական մեդիա հարթակներում որոշ քննարկումներում գովերգում էին այն «վնասները», որ ստացել էին կարճ վաճառքով զբաղվող սպեկուլյանտները: «GameStop մեմը» ստեղծեց մի համայնք, որը ոչ միայն միասնական ներդրումներ էր կատարում, այլև ակնհայտորեն զարգացնում և պահպանում էր «խմբային ոգին»:

«GameStop»-ին և այլ բաժնետոմսերին ուղղորդված ազդեցության վարքագիծը քննադատվել է և անվանվել «շուկայի մանիպուլյացիա», սակայն պարզ չէ՝ արդյոք SEC-ի (ԱՄՆ-ում արժեթղթերի շուկայի կարգավորիչ) գործողությունները կարող են կանխել մեմոկրատիայի ջինին, կամ արդյոք «Reddit»-ի հասարակական ազդեցության ռազմավարությունը էապես տարբերվել է «կարգավորիչի» կողմից ընդունելի համարվող «պատժված /տուժած/» հեջ-ֆոնդերի սպեկուլյատիվ ռազմավարություններից [1]: Շուկային զարմացրեց այն, թե որքան արագ է բաժնետոմսերի գինը փոփոխվում, և թե ինչպես է ինտերնետի միջոցով հաղորդակցությունը կարևոր դեր խաղացել այդ փոփոխության մեջ:

GameStop-ը ընդամենը մեկ օրինակ է: Ապագա մեմոկրատիաները կարող են առաջանալ բազմաթիվ այլ իրադրությունների շուրջ: Ընդ որում, մեմոկրատիան իր ազդեցություն է ունենում ոչ միայն տնտեսական կյանքի, այլև հասարակության սոցիալական, քաղաքացիական, ռազմական, բարոյա-հոգեբանական և արժեքային համակարգի վրա: Այդ զանգվածը, մեծ մասամբ ներկայացնում է, այսպես կոչվող, «միջին խավը»՝ մանր և միջին բուրժուաներին, որոնք իրենք իրենց աշխատանքով ստեղծում են սեփական բարեկեցությունը և հասնելով հարստության ինչ-որ մակարդակի՝ հավատում են իրենց ուժերին և ձևավորում են սեփական «խավի» աշխարհընկալումը: Այդ աշխարհընկալումը ինքնին գտնվում է մշտական շարժման և փոփոխության մեջ՝ իր ազդեցությունը թողնելով և ազդեցություն

ստանալով տվյալ «խավում» առաջ եկող նոր «մեմերից»՝ հիշողություններից, հավատալիքներից, հիպոթեզներից: Որպես հասարակական կյանքի նման դրսևորման օրինակ կարելի է բերել «հին» ու «նոր» բարեկամ երկրների, «լավ» և «վատ» հանրությունների ու ղեկավարների առաջ գալը:

Վերադառնալով տնտեսական կյանքին, կարող ենք մատնանշել վերջին տարիներին աճող հետաքրքրությունը ESG-ի (շրջակա միջավայր, սոցիալական պատասխանատվություն և կառավարում) նկատմամբ, երբ հասարակությունը ընկերություններից գնալով ավելի ու ավելի է ակնկալում վերջիններիս հստակ դիրքորոշումների սահմանումը սոցիալական և բնապահպանական խնդիրների շուրջ [2]:

Բաժնետերերը, ովքեր կիսում կամ «ձևացնում են», որ կիսում են «կիրքը» հասարակական որոշակի նպատակի հանդեպ, ձևավորված և համակարգված սոցիալական մեդիայի «արշավների» միջոցով հնարավորություն են ստանում ստեղծելու նոր «մեմ»՝ վերահաստատելով կորպորատիվ ռազմավարությունը և վարքագիծը բազմաթիվ տարբեր և հակասական միջոցներով [3]:

**Հաստատություններ և գործակալություն.** Թեև փոքր ներդրողները 2021 թվականին առաջ մղեցին «մեմկրատիայի» /ձևավորվող հիշողությունների/ երևույթը, սակայն բաժնետոմսերի մեծ մասը չի պահվում և վաճառվում անհատների կողմից: Միացյալ Նահանգներում սեփական կապիտալի և կորպորատիվ կառավարման մեծ մասը միջնորդավորված է ներդրումային ընկերությունների կողմից [4]: Այս կենտրոնացումը երբեմն թույլ է տալիս հաջողությամբ ազդել կառավարման, ինչպես նաև կառավարման ձևը փոխելու վրա: Կրկին 2021 թվականին «Engine No. 1»-ին հեջ-ֆոնդին հաջողվեց ստիպել՝ փոխելու աշխարհի խոշորագույն կորպորացիաներից մեկի՝ Exxon-ի խորհուրդը՝ կլիմայի փոփոխության շուրջ իր ռազմավարության վերաբերյալ մտահոգությունների պատճառով:

Սովորաբար ներդրումային ընկերություններն են, այլ ոչ թե տնային տնտեսությունները, որոնք ներդրումներ են կատարում նրանց օգնությամբ, քվեարկում բաժնետոմսերով: Սա կարող է հանգեցնել կոնֆլիկտի: Շատ տնային տնտեսություններ կարող են ունենալ կորպորատիվ վարքագծի վերաբերյալ տեսակետներ, որոնք չեն համապատասխանում իրենց ֆոնդի կառավարչի տեսակետներին: Զիթնիկը, օրինակ, ցույց է տալիս, որ անհատ ներդրողները տարբեր կերպ են քվեարկում կորպորատիվ բաժնետոմսերով, քան փոխադարձ հիմնադրամները, որտեղ նրանք ներդրումներ են կատարում [5]:

Իրավաբան Զիլ Ֆիշը պնդում է, որ ֆոնդերի և նրանց հաճախորդների շահերի միջև այս տարբերությունը առաջ է բերում «գործակալության խնդիր» [6]: Անհատ ներդրողները կորպորատիվ վարքագծի վերաբերյալ նախապատվությամբ

յունների լայն շրջանակ ունեն, որոնք դժվար է չափել կամ համախմբել: Միլթոն Ֆրիդմանի հայտնի (1970 թ.) «New York Times»-ի հոդվածը (վերատպված 2007 թ.) պնդում է, որ այս տարածայնությունն անտեղի է [7]: Նա պնդում է, որ առանձին բաժնետերերի մտահոգությունները, ի վերջո, փոխարինելի են. եթե ղեկավարները (կամ այս դեպքում միջնորդները) մեծացնեն ընկերության տնտեսական եկամտաբերությունը, ապա նրա սեփականատերերը կարող են այդ շահույթը ներդնել իրենց ցանկալի սոցիալական խնդրի լուծման համար: Ընդհակառակը, նա շեշտում է, որ այն կառավարիչները, ովքեր ընկերության միջոցները ներդնում են՝ համաձայն կորպորատիվ սոցիալական պատասխանատվության վերաբերյալ իրենց անձնական տեսակետի, «արջի ծառայություն» են մատուցում բաժնետերերին: Ըստ Ֆրիդմանի՝ բաժնետոմսերի արժեքը առավելագույնին հասցնելը նվազեցնում է ագրեգացման խնդրի «չափականությունը» և մեղմացնում գործակալության խնդիրը: Ֆրիդմանի փաստարկը անտեսում է այն հնարավորությունը, որ ուղղակի կորպորատիվ գործողությունները կարող են լինել ավելի արդյու-նավետ միջոց՝ խնդիրը լուծելու համար: Օրինակ, շրջակա միջավայրի վնասից խուսափելը կարող է ավելի էժան լինել, քան դրանից հետո այն մեղմելը:

**Քվեարկության մեխանիզմներ.** Խոշոր ֆոնդերից շատերն ընդունել և համապատասխան քայլեր են ձեռնարկել կորպորատիվ վարքագծի, բնապահպանական և սոցիալական խնդիրների առնչությամբ՝ հաշվի առնելով հաճախորդների մտահոգությունները: Այնուամենայնիվ, հարստությունը կառավարող ընկերությունների համար դժվար է ստուգել և համոզվել՝ արդյոք ընդհանուր առմամբ այս տեսակետները, գործողությունները և քվեարկության որոշումները համահունչ են ներդրողների նախասիրություններին:

Քվեարկության միջոցով որոշումներ ընդունելը կարող է մեղմել ներդրողների և ֆոնդերի կառավարիչների արժեքային համակարգերի միջև հնարավոր հակասությունը: Հիմնադրամները (ֆոնդերը) կարող են ստեղծել միջոց՝ հավաքագրելու ներդրողների կարծիքը և համամասնորեն քվեարկելու ֆոնդին պատկանող բաժնետոմսերով: Սա նրանց որոշ մասով ազատում է քվեարկության բեռից: Նմանատիպ պասսիվ (pass-thought) քվեարկության դրական և բացասական կողմերը բազում անգամ քննարկվել են տարբեր աշխատություններում: Օրինակ, 2018-ին Փոլ Շոթ Սթիվենսը ձևակերպեց պասսիվ քվեարկության հետ կապված մի շարք խնդիրներ, որոնցից հիմնականը հաշվառման դժվարություններն են [8]: Նյու-Յորքի համալսարանի պրոֆեսոր Դեյվիդ Երմակը պնդում է, որ նոր տեխնոլոգիաները կարող են մեղմել այդ շփումներն ու խոչընդոտները [9]:

Հարցերից մեկն այն է, թե արդյոք պասսիվ քվեարկողները երբևէ կարող են բավարար չափով տեղեկացված լինել: Ներդրումային ընկերություններն

ունեն անձնակազմ և ռեսուրսներ՝ ուսումնասիրելու բաժնետերերին առաջարկվող որոշումների և այլընտրանքային փաստաթղթերի ծախսերն ու օգուտները: Մյուս կողմից՝ Զիթնիկի ապացույցները ցույց են տալիս, որ, եթե նույնիսկ առանձին բաժնետերերին հասանելի լինեն նման ծառայություններ, միևնույնն է, նրանք կարող են չհամաձայնել առաջարկություններին [5]:

Պասսիվ քվեարկությունը միակ մեխանիզմը չէ, որը կարող է օգտագործվել համակարգված և անկանոն կառավարման գործողությունների ժամանակ: Հոլթոնը առաջարկեց կորպորատիվ ձայների բորսայի /կազմակերպված փոխանակման/ գաղափարը՝ որպես ընկերության ղեկավարման կարգապահության մեխանիզմ [10]: Քրիստոֆերսոնը և այլք փաստաթղթավորել են «դատարկ քվեարկության» շուկան, որտեղ բաժնետոմսերը բաժնետերերի գրանցման ամսաթվից հետո փոխառվում են կարճ ժամանակով, որպեսզի դրանցով կարողանան քվեարկել շահագրգռված անձինք [11]:

**Ազդեցության շուկա.** Կորպորատիվ քվեարկության արդյունքներով շահագրգռված խմբերը կարող են ընտրել սոցիալական լրատվամիջոցներով ազդեցության ուղին և ժամանակավոր սեփականության շուկան՝ «դատարկ քվեարկության շուկա»: Նրանց հաջողությունը կախված է փոխառու բաժնետոմսերի արժեքից և հասանելիությունից, մի բան, որը ինստիտուցիոնալ ներդրողները և բրոքերները կարող են մասամբ վերահսկել: Հաստատությունները ստիպված կլինեն ընտրություն կատարել՝ արդյոք բաժնետերերի ժողովում քվեարկելու իրավունքից հրաժարվելը բավարար է որպես հաշվետու ժամանակահատվածի դրությամբ փոխառության տված արժեթղթերից ստացված եկամուտի այլընտրանք: Հերսթի և Ռոբերտսոնի վերջին աշխատանքը մատնանշում է, որ հաճախ բաժնետերերի ժողովների օրակարգը հասանելի չի լինում ժողովի գրանցման ժամանակահատվածում [12]:

**Ապատեղեկատվություն.** «Պասսիվ քվեարկության» և «դատարկ քվեարկության» կիրառմամբ ներդրողների հնարավորությունների ավելացումը բարձրացնում է սոցիալական մեդիայի միջոցով բաժնետերերի համակարգված գործողությունների հնարավորությունը: Սա կարող է հավասարակշռել իրական սեփականատերերի հանդեպ խոշոր ինստիտուցիոնալ սեփականատերերի ազդեցությունը: Մյուս կողմից՝ դժվար է վերահսկել սոցիալական լրատվամիջոցների ապատեղեկատվությունը: 21-րդ դարում ամերիկյան քաղաքականության անվիճելի դասերից մեկն այն է, որ աղմկահարույց քարոզչությունը կարող է հավաքել և՛ ձայներ, և՛ օժանդակություն: Եթե այս քարոզչությունը զարգանա դեպի ֆինանսական ոլորտ, այն կարող է վերածվել «գաղափարական ներդրումների» [13]: Վերջին տարիներին ամերիկյան լրատվամիջոցները ցույց են տվել, որ

գաղափարական բևեռացման խթանումը կարող է չափազանց շահավետ լինել [14]: Դժվար չէ եզրակացնել, որ ներդրումային ընկերությունները կարող են հետևել այս «դրական» օրինակին:

Ֆինանսների հետ կապված սոցիալական մեդիա համայնքների ուսումնասիրությունը դեռևս սկզբնական փուլում է, բայց արդեն կան հետազոտական ապացույցներ, որ և՛ անհամաձայնությունը, և՛ էմոցիաները դեր ունեն ինչպես շուկայի խորության [15] ու իրացվելիության, այնպես էլ գնի [16] վրա ազդելու գործում:

Դեռ պետք է պարզվել՝ արդյո՞ք շուկաները թույլ են տալիս բաժնետերերի կառավարման համակարգված գործողություններ սոցիալական մեդիայի միջոցով: Սակայն կարծիքն ու գործունեությունը արագ համակարգելու ներուժը, անշուշտ, առկա է բաժնետոմսերի բոլոր հիմնական շուկաներում:

Ունենալով փոքր ներդրողների համակարգված առևտրի նախադեպ՝ պետք չէ բացառել համակարգված կորպորատիվ կառավարման/քվեարկության վարքագծի հնարավորությունը և, հետևաբար, արդյունքը, որը պարտադիր չէ, որ բխի ներդրողների և հասարակության լավագույն շահերից: Բաժնետերերի դեմոկրատիան լավագույն դեպքում կորպորացիայի գիտակցված կառավարման մեխանիզմ է, սակայն մեմոկրատիան կարող է ղեկավարությանը հեռացնել տեղեկացված կորպորատիվ կառավարման ճանապարհից դեպի ավելի նեղ հետաքրքրություններ, որոնք կապված չեն բաժնետերերի բարեկեցության ավելացման կամ շահագրգիռ կողմերի լայն շահերի հետ: Գաղափարախոսական ներդրումները կարող են օգնել՝ մեղմելու սոցիալապես վնասակար կորպորատիվ վարքագիծը, բայց դա կարող է ունենալ նաև հակառակ ազդեցություն՝ բևեռացված ուղղություններով ընկերությունների վերաբաշխման տեսքով: Բաժնետերերի քվեարկության ավելացող ուժի և կորպորատիվ վարքագծի վերաբերյալ բաժնետերերի մտահոգությունների աճի պայմաններում առաջնային հարցը հետևյալն է. արդյո՞ք բաժնետերերի և հասարակության շահը առաջնային է, և ըստ այդմ՝ ինչպես է համակարգվում կառավարման գործունեությունը, արդյո՞ք այն բխում է ներդրողների և հասարակության լավագույն շահերից:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Macey, J.R.** Securities Regulation as Class Warfare // Columbia Business Law Review, Forthcoming. - 2021.
2. **Zheng, L.** We're Entering the Age of Corporate Social Justice // Harvard Business Review, 2020.
3. **Daugaard, D.** Emerging New Themes in Environmental, Social and Governance Investing: A Systematic Literature Review // Accounting & Finance – 2020. - 60 (2). - P. 1501–1530.

4. **Bogle, J.C.** The Battle for the Soul of Capitalism. - London: Yale University Press, 2008.
5. **Zytnick, J.** Do Mutual Funds Represent Individual Investors? / SSRN. <https://ssrn.com/abstract=3803690>. 2021.
6. **Fisch, J.E.** Mutual Fund Stewardship and the Empty Voting Problem // University of Pennsylvania, Institute for Law & Economics Research Paper 21–28. - 2021.
7. **Friedman, M.** The Social Responsibility of Business Is to Increase Its Profits // In Corporate Ethics and Corporate Governance. -Berlin, Heidelberg: Springer. 2007. - P. 173–178.
8. **Stevens, Paul Schott.** “SEC Should Reject Complex, Costly “Pass-Through” Proxy Voting.” ICI Viewpoints. - October 2. 2018. [https://www.ici.org/viewpoints/view\\_18\\_passthrough\\_voting](https://www.ici.org/viewpoints/view_18_passthrough_voting).
9. **Yermack, D.** Shareholder Voting and Corporate Governance // Annual Review of Financial Economics. – 2010. - 2 (1). – P. 103–125.
10. **Holton, Glyn A.** Investor Suffrage Movement // Financial Analysts Journal. -2006. - 62 (6). – P. 15–20. doi:10.2469/faj.v62.n6.4349.- 2006.
11. **Christoffersen, S.E., Geczy C.C., Musto D.K., and Reed A.V.** Vote Trading and Information Aggregation // The Journal of Finance. - 2007. - 62 (6). - P. 2897–2929.
12. **Hirst, S., and Robertson A.** Hidden Agendas in Shareholder Voting. - 2021. SSRN. <https://ssrn.com/abstract=3833304>.
13. <https://investorplace.com/2022/01/why-dvac-stock-will-continue-to-trade-high/>
14. **Kennedy, Dan.** For Five Years, Trump Outrage Has Fueled Media Profits. So Now What? <https://www.wgbh.org/news/commentary/2021/01/27/for-five-years-trump-outragehas-fueled-media-profits-so-now-what>. 2021.
15. **Cookson, J.A., and Niessner, M.** Why Don't We Agree? Evidence from a Social Network of Investors // The Journal of Finance – 2020. - 75 (1). - P. 173–228.
16. **Long, C., Lucey B.M., and Yarovaya, L.** “I Just Like the Stock” versus “Fear and Loathing on Main Street”: The Role of Reddit Sentiment in the GameStop Short Squeeze. SSRN. <https://ssrn.com/abstract=3822315>. -2021.

**К.В. ТУРЬЯН**

### **ДЕМОКРАТИЯ ИЛИ МЕМОКРАТИЯ АКЦИОНЕРОВ**

Исследовано влияние акционерной демократии и мемократии в результате развития и широкого использования информационных онлайн-систем в управлении корпорациями с учетом интересов и с целью повышения благосостояния акционеров и общества.

**Ключевые слова:** демократия, мемократия, пассивное (pass-tho ught) голосование, прокси (по доверенности) голосование, управление компаний.

K.V. TURYAN

## DEMOCRACY OR MEMOCRACY OF SHAREHOLDERS

An attempt is made to investigate the impact of shareholder democracy and memocracy as a result of the development and widespread use of online information systems in the management of corporations, taking into account the interests, and in order to improve the welfare of shareholders and society.

**Keywords:** democracy, memocracy, pass-thought voting, proxy voting, company management.

ՀՏԴ 33

Լ.Մ. ԱՂԱԲԱԲՅԱՆ, Գ.Ս. ՄՈՍԻՆՅԱՆ

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՄՈԴԵԼԻ ՀԻՄԱՆՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ (Վանաձոր)

Դիտարկվում են տնտեսական մարդու մոդելի ժամանակակից հիմնախնդիրները: Տնտեսական մարդ հասկացությունը լայնորեն օգտագործվում է գիտական ճանաչողության տարբեր ոլորտներում. տնտեսագիտության, սոցիալական փիլիսոփայության, աշխարհագրության, մշակութաբանության, մարդաբանության և այլն: Մարդու մոդելի ուսումնասիրությունը արդիական է, քանի որ այն նպաստում է ժամանակակից տնտեսագիտության մեթոդաբանական հիմքերի ըմբռնմանը և, հետևաբար, նաև սոցիալական բազմաթիվ գործընթացների ըմբռնմանը:

**Առանցքային բաներ.** ժամանակակից գիտական գիտելիքներ, մարդկային մոդել, «տնտեսական մարդ», «սոցիոլոգիական մարդ», «հոգեբանական մարդ»:

Աշխատանքի նպատակն է վերլուծել մարդու մասին ժամանակակից գիտական գիտելիքներին բնորոշ մոդելային պատկերացումները, բացահայտել այնպիսի ամենազարգացած մոդելների առանձնահատկությունները, ինչպիսիք են «տնտեսական մարդու», «սոցիոլոգիական մարդու», «հոգեբանական մարդու» մոդելները: Քննարկվում է գոյություն ունեցող մոդելային ներկայացումների անբավարարությունը մարդկային վարքագծային պրակտիկայի համապարփակ ներկայացման ոլորտում: Ուսումնասիրությունը բացահայտում է դիտարկվող մոդելների ակնհայտ անկատարությունը՝ մարդուն բնորոշ դրդապատճառների թերի լուսաբանման պատճառով, ինչպես նաև մարդկային վարքի դետերմինիզմի զգալի աստիճանը բոլոր հիմնական մոդելներում՝ տնտեսական, սոցիոլոգիական և հոգեբանական:

Նախանշելով տնտեսական մարդուն բնորոշող այս կամ այն գծերը, յուրաքանչյուր գիտություն առաջնորդվում է հետազոտական կոնկրետ նպատակ-